№ 80 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 21 — 1904 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼԻ 21 № 80

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ենթադրական ցուցմունքներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Աբգար Յովհաննիսեանի թաղումը. Լուրջ միջոցներ են հարկաւոր. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Լուրեր Պարսկաստանից. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ. Դպրոցական առողջապահութեան առաջին միջազգային կոնգրէսը։

ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Մենք հաղորդեցինք տեղեկութիւններ պատերազմող կողմերի զօրագնդերի մասին։ Ռուսաց զօրքի մասին «Русское Слово» լրագիրը, անգլիական «Daily News» լրագրից քաղելով, յայտնում է, որ մայիսի վերջերքում ռուսաց զօրքի թիւը հարաւային Մանջուրիայում կը հասնի կէս միլիոն հոգու հետեւեալ դասաւորութեամբ՝ 200,000 հոգի Եալուի շրջանում, 50,000 Պօրտ-Արտուրի, 20,000 Նիւչժուանի, 100,000 հիւսիս-արևելեան Մանջուրիայի և Վլադիվոստոկի շրջաններում, 30,000 երկաթուղու գծի վրա և 100,000 զանազան յանձնարարութիւնների համար։

Եալունիայում պատերազմական գործողութիւնների յատակագծի մասին բացի զլխաւոր շտաբից ոչ ոք ոչինչ չը գիտէ։ Նոյն իսկ զօրաբաժինների հրամանատարները անյայտութեան մէջ են։ Փոխադրական նաւերի հրամանատարները ծով են դուրս գալիս կնքված ծրարներով։ Կառավարութեան ծրագիրներին կատարելապէս ծանօթ է միայն ծովապետ Տոգո, որին թոյլ է տրված փոփոխել իր բարեհայեցողութեամբ հիմնական ծրագրի մանրամասնութիւնները։

Եալունական զօրքի դիրքի մասին «Новости» լրագիրը հաղորդում է, որ առաջին մասը, բաղկացած երկու դիվիզիաներից և երեք պահեստավաշտերից, գենեբալ Կուրոկիի հրամանատարութեամբ, կենտրոնացած է Եալու գետի վրա, գլխաւորապէս Ըչժուի մօտ։ Զօրքը տեղաւորվել է Ըչժու քաղաքի շրջակայքում և դէպի հիւսիս գետի հոսանքով, նոյնպէս Սեաուսիհէ և աւելի վեր Պիեկտօնի և ուրիշ կետերի մօտ (տես քարտէզ)։

Գետը անցնելու համար եալունացիները պատրաստել են շարժական կամուրջներ, կազմված յատուկ ձևի նաւակներից։ Պօմախուա գետի մօտ ժողովված են մեծ քանակութեամբ նաւակներ։ Այդ պատրաստութիւնների հետ կից պէտք է արձանագրել, որ Սենչժենից և Տատունգօից դէպի արևմուտք նկատվել են եալունական զինուորական նաւեր։ Եռանդուն կերպով պատրաստվելով անցնել Եալու գետը, եալունացիները աչքի առաջ ունեն մի քանի կէտեր՝ միաժամանակ անցնելու համար և անկասկած անկարելի է նախօրօք դուշակել թէ որ կէտով պէտք է կատարվի անցնելը։

Եալունական զօրքի անցնելը կը կատարվի անշուշտ միանգամից, մեծ քանակութեամբ զօրքերով. որոնց առանձնորդը կը լինի գվարդիական զօրաբաժինը, բաղկացած 16,000 հոգուց՝ գեներալ Ինուէի հրամանատարութեամբ. ճիշտ յայտնի չէ, թէ այժմ որտեղ է գտնվում գեներալ Օկուի հրամանատարութեան տակ գտնվող եալունական զօրքի երկրորդ մասը, բաղկացած առաջին, երրորդ և չորրորդ զօրաբաժիններից։

Արտասահմանեան և մասամբ ռուսաց մամուլը պարունակում են ամեն տեսակ հաղորդագրութիւններ այդ առիթով։ Ընդանց բոլորի կարծիքով եալունացիները Եալուն անցնելուց՝ միաժամանակ կը սկսեն յարձակումն գործել Պօրտ-Արտուրի վրա, զօրք իջեցնելով Լաօդունեան թերակղզու արևելքից և արևմուտքից։ Լուրեր են պատում, որ եալունացիները պէտք է զօրք իջեցնեն Դալիենվանի և Ցզինչժօուի ափերում։ Եթէ 1894 թուին եալունացիների համար հարկաւոր էր 25,000 հոգի զօրք Պօրտ-Արտուրի պաշարման համար, այժմ, երբ Պօրտ-Արտուրը լաւ ամրացված է և չինական զօրքի տեղ կրթված և վարժված ռուս զօրքն է պաշտպանում բերդը, հարկաւոր կը գայ եալունական շատ մեծ զօրութիւն ցամաքի կողմից և Տօգօի ամբողջ նաւատորմի գործունէութիւնը ծովի կողմից։

Եւ այդպէս այժմ կարելի է հաստատպէս խօսել միայն Եալու գետն անցնելու մասին, որին պէտք է վնասի ռուսների առաջխաղացութիւնը Կօրէայի արևելեան ափերում, մի իրողութիւն, որ պէտք է հաշուի առնէ եալունական զօրքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Մենք հաղորդեցինք անցեալ անգամ Աբգար Յովհաննիսեանի մահը, որ տեղի ունեցաւ Բաթումում, ապրիլի 15-ին։

Հանգուցեալի մարմինը Բաթումից փոխադրվեց Թիֆլիս, ուր, երէկ, ապրիլի 20-ին, տեղի ունեցաւ Թաղումը Վանքի մայր եկեղեցու բակում։

Թէև առաջուց յայտարարված էր, որ Թաղումը պէտք է կատարվի Վերայի գերեզմանատան, բայց վերջին օրը ստացվեց ամենայն Հայոց Կաթողիկոսից կարգադրութիւն թաղել մարմինը Վանքի Մայր եկեղեցու բակում։ Բ[illegible] ներկայացուցիչներ ուղարկել էր Գարեգին եպիսկոպոս Սաթունեանցին, դիւանապետ Կորիւն վարդապետին և Կարապետ վարդապետին։ Պատգամաւորներ եկել էին նաև Երևանից, Բաթումից, Ալէքսանդրօպոլից և մի մի քանի այլ տեղերից։

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը, որի կառավարիչն էր հանգուցեալը, որոշել էր թաղումը կատարել իր հաշուով, յատկացնելով 1500 ռուբլի գումար։ Քաղաքային Դուման, որի նշանաւոր ձայնաւորներից մինն է եղել հանգուցեալը 23 տարի, ապրիլի 19-ին կայացած իր նիստում, յարգեց հանգուցեալի յիշատակը ոտքի կանգնելով և որոշեց պսակ դնել դագաղի վրա։

Երէկ, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանի առաջ հաւաքվել էին ներկայացուցիչներ զանազան հաստատութիւնների և քաղաքների կողմից, Թիֆլիսի քաղաքագլուխը՝ վարչութեան անդամների և ձայնաւորների հետ, Ներսիսեան դպրոցի աշակերտները և հոգաբարձութիւնը, որ գրել էր և պսակ, իբրև նախկին հոգաբարձուի դագաղի վրա, առևտրական դպրոցի աշակերտները և Մարիամեան-Յովհաննեան դպրոցի աշակերտուհիները, հայ գրողներ, հոգևորականներ և ինտելիգենտ ու բուրժուական հասարակութեան բազմութիւն։ Զորս գիակառքի վրա կախված էին մօտ 60 պսակներ, մետաղից, արծաթէ և մեծ մասը թարմ ծաղիկներից ու դափնիներից, որոնց մէջ կային պսակներ՝ Թիֆլիս քաղաքից, փոխադարձ վարկի բանկից, Երևանի հայ հասարակութիւնից, Բաթումի հայ հասարակութիւնից, Արմաւիրի հայ հասարակութիւնից, Ալէքսանդրօպոլի հայ հասարակութիւնից, Բագուի հայ հասարակութիւնից, Հին-Զուղայի գիւղական հասարակութիւնից, Էջմիածնի ճեմարանի ուսուցչական խմբից, Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնից, Երևանի թեմական դպրոցից, հայ Դրամատիական խմբից, Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութիւնից, հայ քահանաներից, Ներսիսեան դպրոցի ուսուցչական խմբից և պաշտօնեաներից, Բագուի հայ գրագէտներից, նախկին «Արձագանք» թերթի աշխատակիցներից, Մոսկվայի հայ հասարակութիւնից, Շամախու հայ հասարակութիւնից, Ագուլիսի հայ հասարակութիւնից, Օդեսայի հայ գաղութից և ուսանողութիւնից, Հին-Նախիջևանի հայ հասարակութիւնից, Նոր-Նախիջևանի Բարեգործական ընկերութիւնից, «Մ[illegible]ТОКЪ»-ի, Լումայի ու Տարազի խմբագրութիւններից, Թիֆլիսի հայ հասարակութիւնից, Ա. Մանթաշեանից, երկրորդ գիմնազիայի հայ աշակերտներից և այլն։

Բնակարանի առաջ, Յովհաննես-Մարիամեան ուսումնարանի հանդէպ, երբ դագաղը դուրս բերվեց, այդ դպրոցի կրօնուսոյց Արսէն քահանայ Բագրատունին մի դամբանական խօսեց, դրուատելով հանգուցեալի բարեմասնութիւնները, իբրև հայոց եկեղեցու ջերմեռանդ զաւակի։ Ապա յուղարկաւորութիւնը բեհբութեան փողոցից դիմեց դէպի Վանքի մայր եկեղեցին, ուր պատարագիչ էր Գարեգին եպիսկոպոս Սաթունեան։ Պատարագից հետոյ եկեղեցում դամբանականներ խօսեցին Կարապետ և Գարեգին վարդապետները և ուրիշները։

Ինչպէս հաղորդեց տեղական «Новое Обозрѣніе» լրագիրը, ապրիլի 18-ին, Էջմիածնում, ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրութեամբ, Մայր տաճարում կատարվել է հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին, և հանդիսաւոր եղել է ինքը Վեհափառ Կաթողիկոսը, իսկ Եղիշէ վարդապետ Մուրադեան խօսել է դամբանական, նկարագրելով Աբգար Յովհաննիսեանին իբրև հասարակական գործիչ և տաղանդաւոր հրապարակախօս։ Հոգեհանգիստ կատարվել է և Պետերբուրգի հայոց եկեղեցում։

«ԼՈՒՐՋ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ

(Նամակ Ներքին-Ագուլիսից)

Վարակիչ հիւանդութիւնները օրէցօր աւելի ու աւելի ազատ մուտք են գործում մեր նահապետական վարք ու բարքերով կրթված ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԷՍԸ

(Նամակ Գերմանիայից)

III

Մի շարք դասախօսներ առանձին ոգևորութեամբ շօշափեցին սեռական կեանքի (Sexualität), սեռական յարաբերութիւնների և մղումների խնդիրը։ Դոկտոր Բլաշկո (Բերլինից), ուսուցիչ Թլուխ (Վիէննայից) և պրոֆեսսոր Շուլցի (Բուդապէշից) գրեթէ մի և նոյն հիմունքներով բողոքում են այսօրվայ կրթական սիստեմի դէմ այն տեսակէտից, որ այնքան չնչին տեղ է տալիս և սաորին դպրոցներում բոլորովին բացասում—կենսաբանական (biologische) առարկաների դասաւանդութեան կարևորութիւնը։ Մինչև ե՞րբ խուսափել այն հանգամանքից, որ կեանքի բնական զարգացումն ու ուսումնը ընդհարվում են աշակերտի մէջ խըմորված սատուածաշնչային աշխարհայեացքի հետ։ Ո՛չ, անհրաժեշտ է մատաղ սերնդի համար ամենից առաջ կենսաբանական նախապատրաստութիւն, որպէս զի նրա հիման վրա հնարաւոր լինի բացատրել նրան և՛ ներքին օրգանիզմի ամենագաղտնի մասերը։ Անբարոյական է նոյն իսկ, հասունացած սերնդից թագցնել մարդկային սեռի աճեցման ամենակարևոր մոմենտները։ Ընդհակառակը, աշակերտներին պարզելով սեռական կեանքի, յարաբերութիւնների և մղումների ամբողջ կացին ու ընթացքը, կարելի է հասնել այն առողջապահական-բարոյական արդիւնաւոր հետևանքին, որ պատանին դեռ ևս աշակերտական նստարանի վրա կը գիտակցէ սեռական անկանոն յարաբերութիւնների կործանիչ վախճանը—սեռական հիւանդութիւնները, իրանց աւերիչ հետևանքներով։

Այնուհետև պրոֆեսսոր Ալֆել Իոհաննեսեան (Խրիստոսանիայից) տալիս է համառօտ ծանուցում Նորվեգիայի դպրոցների առողջապահական վիճակի մասին։ Այժմ առողջապահական ուսումունքը դարձել է Նորվեգիայում դպրոցի ծրագրային կարևոր առարկաներից մէկը՝ թէ ստորին, թէ միջին և թէ բարձր կրթական հաստատութիւններում։ Նորվեգիայում մեծ ուշադրութիւն է դարձվում ֆիզիքական ոյժերի հրահանգման վրա։ Դպրոցական բժիշկ ունենալը պարտադիր է ամենուրեք, օրիորդաց դպրոցներում՝ մեծ մասամբ բժշկուհիներ։ Ժողովրդական դպրոցներում առողջապահութեան վերաբերեալ օրէնքներ մշակվել են դեռ 60-ական թուականներից սկսած։ Իւրաքանչիւր դպրոց ունի առողջապահական խնամատար յանձնաժողով, որի մէջ առաջնակարգ տեղը գրաւում է դպրոցի բժիշկը։ Միայն Խրիստոսանիայի 19 ժողովրդական դպրոցներից 17-ը ունեն իրանց դպրոցական բաղնիքները, ուր իւրաքանչիւր աշակերտ տարին ութ անգամ մաքրվում է։ Մայրաքաղաքի ժողովրդական դպրոցների 29%-ը ստանում է ձրիաբար ճաշ բոլոր աշակերտների համար։ Այդ առիթով քաղաքը տարեկան 180,000 մարկ ծախս ունի։

Բաւական հետաքրքրական է դոկտոր Լը Ժենտրի (Պարիզից) դասախօսութիւնը՝ «Ուսուցիչների եւ աշակերտների հիւանդութիւնների յարաբերութիւնները» վերնագրով։ Նա մատնացոյց է անում այն ՀԱՍԱԿԱՐ հանգամանքի վրա, թէ ինչպէս վարակիչ հիւանդութիւնները, ամենից առաջ տուբերկուլոզը, անցնում են և անցնել կարող են ուսուցիչներից աշակերտների վրա և ընդհակառակը։ Այդ պատճառով նա առաջարկում է մեծ զգուշութիւն ունենալ նաև ուսուցիչների առողջապահական դրութեան առիթով։ Ապա Լը Ժենտրին երկար կանգ է առնում ուսուցիչների և աշակերտների ջղային հիւանդութիւնների նշանակութեան վրա։

Նոյն չափով հետաքրքրական է դր. Սիֆինգերի (Մանհայմից) դասախօսութիւնը՝ «Ժողովրդական դպրոցների կազմակերպութիւնը ըստ մանուկների բնական ընդունակութեան» վերնագրով։ Նա հետևում է, այսպէս ասած՝ «ոչոգութեան-ընտրութեան սիստեմին», առաջարկելով, որ մանուկների խմբակցական դասաւանդութիւնը կատարվի միայն ըստ նրանց ֆիզիքական և մտաւոր կարողութիւնների համաչափութեան։ Այդ առիթով նա առաջարկում է երեք կարգի կրթութեան միջոցներ. 1) Դասարաններ՝ միջին և լաւ ընդունակ աշակերտների համար։ 2) Դասարաններ՝ չափաւոր թոյլերի համար։ 3) Դասարաններ՝ խիստ թոյլ օժտված և տկար աշակերտների համար։ Դրանցից իւրաքանչիւր բաժանմունք պիտի ունենայ իր առանձնայատկութիւններին համապատասխանող ուսուցչական մարմինն ու դասական մեթոդը։ Ինչպէս դասախօսն ասում է, այդ ծրագիրը մեծ աջողութիւն է ունեցել Մանհայմում։

Առանձին ուշադրութեան արժանի են՝ «Միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցների երկսեռ սերնդի համախմբված կրթութեան մասին» եղած դասախօսութիւնները, որոնցից ընտրում ենք մենք պրոֆեսսոր Պալմբերգի (Հելսինգֆորսից) նոյն վերնագրով թեման, լի անտիֆեմինիստական ցուցմունքներով։ Պրոֆէսսոր Պալմբերգը օրինակ է բերում բացառապէս ֆինլանդական յարաբերութիւնները։ Երկու սեռերի միասին սովորելու երևոյթը մուտք է գործել Ֆինլանդիայում 1883 թուին։ Այժմ այնտեղ 22 միջնակարգ դպրոցներում սովորում են միասին 2000 օրիորդներ և 1600 տղաներ։ Առաջին կին ուսանողը Ֆինլանդիայում եղել է 1870 թ., 20 տարուց յետոյ, 1890 թ. կային արդէն 19 ուսանողուհիներ։ Իսկ 1890—91 թ., երբ պաշտօնապէս թոյլատրվում է համալսարանում արական սեռի հետ սովորելու, այդ թիւը բարձրանում է յանկարծ 158-ի։ Իսկ 1896—1901 թ. հասնում է

նարատ ընտանիքներում։ Նրանց մահաբեր ճանկերում «կենդանի» զոհերի թիւը աճում է սոսկում ազդող արագութեամբ։ Նոր սերունդը կանգնած է այլասեռման անաւոր անդունդի առաջ։ Բազմամարդ քաղաքների նեխված, ապականված մթնոլորտում բարոյական կոչման բարձրութիւնից վայր ընկած երիտասարդը, կեանքի վախճանին մօտեցող ծերունի ծնողների թախանձանքին զիջանելով, գիւղ է շտապում ամուսնական կապեր հաստատելու մի անմեղ, դեռ կուսութիւն պահպանած օրիորդի հետ, գէթ դրանով իր ծնողներին մխիթարանք ու սփոփանք պատճառելու, վշտի, ցաւերի անտանելիութիւնը թեթեւացնելու նրանց դառն գոյութեան վերջին րոպէներում։

Ո՞վ է հարցնողը, երիտասարդի առողջութիւնը երաշխաւորող, բժշկից ամուսնութեան մէջ մտնելու թոյլատրող վկայական պահանջողը։ Վերջապէս, դժուար է բժշկին արդարութեան, բարոյական պարտականութեան առաջ մեղանչել տալ դրամի անյագթ ոյժով։ Մեր ծնողները դեռ այն գիտակցութեան, պարտաճանաչութեան հասած չէն—առողջ, պիտանի սերունդ արտադրել հասարակութեանը, ազգին, մարդկութեանը։ Նրանք, ընդհակառակը, անվերջ ճիգեր են թափում որքան կարելի է շուտով հեռացնել օրիորդին տնից, որպէս մի աւելորդ բեռի, զուր հաց ուտողի։ Մեր տգէտ ծնողների այդ անմիտ տնտեսական ծախսերի սոյնպէս յիմար խնայողութիւնը քաջալերում է ընտանիքների թշուառութեան, դժբաղդութեան սոսկալի ճիրաններին է մատնում։

Լոկ շահասիրական նպատակներով, յետին, մութ մտադրութիւններով կատարված ամուսնութիւնը շուտով բացվում է նորապսակների առջև իր ամբողջ մերկութեամբ ու այլանդակութեամբ։ Ամուսինը հեռանում է քաղաք, կինը, վարակված լինելու պատճառով, անկարող է լինում երեխաներ չը վիժել, կամ անկանոն ծննդաբերութիւններից առաջացած հիւանդութիւններից չը տանջվել։ Աղջկայ ծնողները դեռ նոր են հասկանում իրանց արած սխալ քայլի կորստաբեր հետևանքները։ Քնած չէ և փեսան։ Նա այժմ է աշխատում հանգստացնել ազգականներին, գլխաւորապէս կնոջ ծնողներին իր առողջութիւնը երաշխաւորող վկայականով։ Նրա խիղճը հանգիստ է։ Մեծ չարիք չէ արդեօք։

Ներկայումս մեզանում կան սիֆիլիսի ախտով վարակված ընտանիքներ։ Նրանց բարեկամները, ազգականները, թէև պարզ գիտեն, որ իրանք էլ, յարաբերութիւն ունենալով այդպիսիների հետ, կարող են վարակվել, բայց մի՞թէ կարելի է այցելութեան չը գնալ, չէ՞ որ նա գիւղի հարուստ է, իշխան է, խնամի է։ Դեռ ևս վարակված ընտանիքի անդամները խիստ դժգոհութեան, անբաւականութեան նշաններ են ցոյց տալիս, սպառնում են նոյն իսկ ընդմիշտ խզել բարեկամական կապերը գիտակցութիւնը գլխին հարևանի հետ, որը արգելում է իր ընտանիքի անդամներին վարակվածի հետ շփումն ունենալ։

Հրաւիրում ենք այդ շատ կարևոր ու անհրաժեշտ խնդրի վրա հասարակութեան լուրջ ուշադրութիւնը։ Թող նրա ամեն մի անդամը ամեն կերպ աշխատէ խոյս տալ վնասակար ախտերով վարակված ընտանիքներից։ Բարոյական պարտք է ընկնում ամբողջ հասարակութեան վրա աշխատել չէզոքացնել նրանց միւս ընտանիքներից, արգելել նրանց նոյն իսկ ջուր վերցնել այն աղբիւրից, որը խմելու և այլ պէտքերի համար ջուր է մատակարարում գիւղին, կամ լուացք անել նրա կողքին, հակառակ պարագային, հասարակութիւնը իր յանցաւոր անտարբերութեանը զոհ կը տայ մեր մատաղ, նորաբողբոջ սերունդը, որից շատ բարիքներ է սպասվում։

Լուրջ ու երկարատև ուշադրութիւն է հարկաւոր, անընդհատ կռիւ պահանջ է զգացվում այդ մեծ չարիքի դէմ։

Մ. Թխոյեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, ապրիլի 16-ին

Արիստակէս եպիսկոպոս Սէդրակեանը իր Թիֆլիսի թեմի առաջնորդութեան ժամանակ, սկսեց նոգալ կառուցանելու համար մի երկաթեայ մշտական կամուրջ Վանքի եկեղեցու գաւթից սկսած մինչև Կուր գետն այն ափը, ուր ամեն տարի կառուցվում է ջրորդների հանդէսը։ Սրբազանի յորդորմամբ կամուրջի համար հարկաւոր երկաթները նուիրեց այժմ հանգուցեալ Ե. Մ. Յակոբեանը, որոնք այժմ էլ ածված են Վանքի եկեղեցու գաւթում եւ ժանգից փթում են։ Ապա սկսվեց շինարարական համար հանգանակութիւն, սակայն [illegible] պատճառով՝ կամուրջը չը շինվեց այլ եւս եւ 800 ռուբլի ժողովված դրամը մնաց։ Անա արդէն անցել են տասնեակ տարիներ եւ ոչ մի տեղեկութիւն չը կայ այդ դրամի գործածութեան մասին։ Ցանկալի է իմանալ, թէ ուր է գտնվում այդ դրամը եւ ինչ բանի վրա է ծախսվել։

Նուիրատուներից մէկը

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, ապրիլի 1-ին

Ի գիտութիւն այն բոլոր նուիրատուների, որոնք վերջին հինգ տարիներից ի վեր դրամ են յանձնել կամ ուղարկել Թաւրիզեցի պ. Աբրահամ Փանուէլեանցին, որպէս զի վերջինս հանգանակված փողերով դպրոց պահէ Մուժումբար գիւղում, յայտնում ենք հետեւեալը։

Թէ ինչ պատճառներով, աւելորդ է ասել, արդէն հ. Եղիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեանցի առաջնորդութեան օրով յիշեալ պ. Աբրահամ Փանուէլեանցը կամաց թէ ակամայ հեռացել է Մուժումբարից, դպրոցը յանձնված է ժողովրդից ընտրված եւ նոյն թեմակալ առաջնորդից հաստատված հոգաբարձութեան, իսկ այն բոլոր դրամները, որոնք գտնվում են պ. Փանուէլեանցի մօտ, այսօր ոչ մի օգուտ չեն տալիս ոչ Մուժումբարի ուսումնասիրաւ աղքատիկ հայ մանուկներին, ոչ էլ ուրիշ որ եւ է տեղի. թէ ինչի են ծառայում այսօր այդ դրամները, յայտնի չէ ոչ ոքի։ Իսկ պ. Աբր. Փանուէլեանցը, որ ոչ ոքի հաշիւ տալ չի կամենում, ուզում է արդարացնել իրան նրանով թէ «նուէրները դրված են իմ տրամադրութեան տակ»։

Այդպիսի մի վայրում, ուր «սահման քաջաց զէն իւրանց», խնդիրը հրապարակով դնում ենք քարեսէր եւ գուցէ գործին անտեղեակ նուիրատուների առաջ եւ հարցնում. ճիշտ է, որ ամեն նուիրատու իր տուած դրամը դրել է պ. Աբր. Փանուէլեանցի տրամադրութեան տակ նաեւ այն ժամանակ, երբ նա ոչ մի կրթական հաստատութեան չի յատկացնում։

Առաջնորդական տեղապահ Ատրպատականի՝
Մեսրոպ վ. Մաքսուդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պարսից Մուզաֆար-Էդդին Շահը, ինչպէս կարդում ենք «Արարատ» ամսագրի վերջին համարում, ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի Նօվրուզի տօնին ուղարկած շնորհաւորական հեռագրին բարեհաճել է պատասխանել. «Նորին Սրբութիւն Մկրտիչ Կաթողիկոսի ամենայն հայոց. Ինձ յոյժ հաճելի է այն բարեմաղթութիւնների ստացումը, որ Ձեր Սրբութիւնը և միաբանութիւնը յայտնում էք։ Երջանիկ եմ համարում ինձ, որ կարող եմ հաւաստիացնել Իմ բարեկամութիւնը, որ ունեմ առ Ձեզ և այն բարեացակամ զգացումները, որ տածում եմ առ Ձեր կրօնակիցները»։

—

Կազանում կանանց բարձրագոյն կուրսեր հիմնելու յանձնաժողովը, որ ընտրված է նոյն քաղաքի համալսարանի դասատուներից, զեմստվոների և քաղաքի հիմնարկութիւններին ուղարկել է մի բացատրութիւն, որով պարզում է, թէ Ռուսաստանի արևելեան նահանգներից և Միջին Ասիայից եթէ կանայք ուզում են բարձրագոյն կրթութիւն ստանալ, պէտք է գիմեն մայրաքաղաքները. իսկ այնտեղ շատերը տեղ չեն գտնում, շատերն էլ չեն դիմանում մայրաքաղաքների կլիմային կամ տիրող կենսական բաւական թանգ պայմաններին։ Այդ բոլորը աչքի առաջ ունենալով՝ յանձնաժողովը կոչ է անում բոլորին նիւթապէս օգնել այդպիսի մի կարևոր և գեղեցիկ ձեռնարկութեան, որին արդէն 3,000 ր. նուիրել է Կազանի նահանգական զեմստվոն նոյն քաղաքի Կայսերական համալսարանի 100-ամեակի առիթով։

—

Պօստ-հեռագրական գործը Ռուսաստանում 1902 թ.-ին։ Մօտ ժամանակներս տպագրվել է Պետերբուրգում «Պօստ-հեռագրական վիճակագրութիւնը 1902 թ.-ին», որից ժայրաքաղաքի լրագիրները բերում են հետեւեալ թիւերը։ Պօստ-հեռագրական բոլոր հիմնարկութիւնների թիւը 1903-ի յունվարի 1-ին եղել է 5,107 հատ, որից 2637-ը պօստային և հեռագրական թղթակցութիւնների համար, իսկ մնացածները կամ միայն հեռագրական են եղել կամ միայն պօստային։ 1901 թ.-ից գրասենեակների ընդհանուր թիւն աւելացել է միայն 156-ով, այսինքն՝ աճել է 3,2%։ Բացի դրանից՝ իբր թղթակցութիւնների համար օժանդակ հիմնարկութիւններ՝ ծառայել են երկաթուղային 4,324 կայարաններ։ Ծառայողների թիւը եղել է 24,696 հոգի աստիճանաւորներ և 18,505 ստորին ծառայողներ։ Հիմնարկութիւնների այդ թոյլ աճեցողութեանը համապատասխանում է նոյնպէս և պօստային արկղների թւի դանդաղ աճեցումը։ Արկղները եղել են ընդամենը 18,626 հատ կամ 1901-թ.-ից 699 հատ միայն աւելի։ Օրական մէկ անգամ թղթակցութիւն ընդունող և տուող գրասենեակների թիւը եղել է 6,714 (6,519 1901 թ.). 1,088 գրասենեակ՝ շաբաթական երկու անգամ պօստ ընդունող, 6,534 հատ շաբաթական մէկ անգամ և 268 հատ 15 օրը մէկ անգամ։ Պօստով ուղարկված է՝ ներքին և արտաքին՝ 1,006 միլիոն կտոր ամեն տեսակ իր. առաջին տեղը բռնում են փակ նամակները —433 միլիոն, իսկ երկրորդ տեղը՝ պարբերական հրատարակութիւնները—265 միլիոն. Իսկ հեռագիր ուղարկված է 20 միլիոն, որոնցից ներքին եղել է 17, իսկ արտաքին՝ 3 միլիոն։ Ամբողջ հիմնարկութեան տուած զուտ արդիւնքը եղել է 17,600,000 բուբլի։ «Այսպիսով, ասում է «Русск. Вѣд.» լրագիրը, պօստ-հեռագրական վարչութիւնը փոխանակ ամենաառաջին նպատակ դարձնելու հասարակութեան կուլտուրական և առևտրական շահերը, որոնց ծառայելը կազմում է պօստի և հեռագրի միակ կոչումը՝—առաջվայ նման այդ հիմնարկութիւնները դարձնում է պետական խոշոր եկամուտների աղբիւր»։

—

Կովկասեան բժշկական վարչութիւնը դիմել է և խնդրել պատշաճաւոր վարչութեան, որ Բուխարայի նահանգի ընկեցիկ երեխաներին խնամելու համար տրվի 5882 բուբլի ներկայ տարվայ ընթացքում, իսկ Բաթումի նահանգի համար 112 բուբլի։ Ներկայումս Բուխարայի նահանգում ընկեցիկների թիւը հասնում է 107 հոգու երկու սեռից և ամեն մէկին ամսական ծախք գնում է 3—9 բուբլի։

—

Էջմիածնի «Արարատ» ամսագրի ապրիլի համարից իմանում ենք, որ այդ ամսագրի խմբագիրը նորից փոխվել է և խմբագիր է նշանակվել Եղիշէ վարդապետ Մուրադեան։ Նոր խմբագիրը մի առանձին յօդուածով, բացատրելով իր հայեացքը «Արարատ» ամսագրի նշանակութեան մասին, ցոյց տալով, թէ այդ կրօնական ամսագիրը շատ քիչ բաւականութիւն է տուել մինչև այսօր այն հարցերին, որոնց մէջ պէտք է արտափայլէ հայ հոգևորականի կեանքն ու բարոյական աշխարհը, խոստանում է ոչինչ չը խնայել աշխատելու համար, որ ամսագիրը այդ նպատակին ծառայէ։ Եթէ ի նկատի ունենանք, որ վերջին երկու տարվայ ընթացքում գրեթէ 4—5 խմբագիրներ փոխվեցին և ամեն մի նոր խմբագիր զանազան խոստումներով ու ծրագիրներով առաջ եկաւ, եթէ ի նկատի ունենանք, որ Եղիշէ վարդապետ Մուրադեան դեռ մի քանի ամիս առաջ հրատարակեց Թաւրիզում «Գործ» անունով մի շաբաթաթերթի առաջին համարը, որտեղ նոյնպէս բաղում խոստումներ էին շռայլված, մի ամբողջ ծրագիր էր պարզված, դժուար թէ կարելի լինի հաւատալ, որ նոր խոստումները և նոր խմբագրութիւնը յարատև, իրական լինեն։ Մեզ մնում է միայն սպասել և տեսնել նոր խոստումների իրագործումը։ Անկեղծօրէն կը ցանկայինք տեսնել, որ մեր միակ կրօնական ամսագիրը դուրս գար վերջապէս իր երերուն և տատանեալ դրութիւնից և կարողանար նըպաստել հայ հոգևորականութեան հոգևոր-բարոյական-մտաւոր զարգացման գործին։

—

Ղազախի գաւառի ՄՈՎՍԷՍ ԳԻԻՂԻՑ մեզ գրում են. «Այս ամեն անցաւ շատ լաւ, իսկ

այդ թիւը 572-ի։ 1900 թ.-ականից սկսած տարեկան գրվում են 110—120 ուսանողուհիներ, որ կազմում է 25%-ը տարեկան բոլոր նոր գրվող ուսանողների։

Բայց...։ այս խոշոր փաստերից յետոյ, որ ակներև վկայում են կնոջ անուրանալի առաջադիմութիւնը փոքրիկ Ֆինլանդիայում, սկսում է պրոֆէսոր Պալմբերգը իր միակողմանի և նեղահայեաց դատավճիռը։ Ըստ նրա կին ուսանողները 1890 թ. առաջ և յետոյ անհագին տարբերութիւն են ցոյց տալիս։ Առաջինները համարվում էին անհամեմատ ինտելիգենտ, լուրջ և եռանդուն, քան ապագայ ուսանողուհիները։ Առաջ 19 ուսանողուհիներից 13-ը կամ 68%-ը աւարտել են համալսարանի ամբողջ դասընթացքը և ստանձնել կեանքի մէջ կարևոր պաշտօններ։ Իսկ այժմ միայն 12% է վերջնական քննութիւն տալիս համալսարանում։ Այժմ միջնակարգ դպրոցներում օրիորդների ձեռք բերած վկայականները անհամեմատ ցածր են որակով, քան առաջ։ 1890 թ. առաջ գիմնազիայի աշակերտուհիները ստանում էին ընդհանուր առմամբ ամենաբարձր վկայականը (Laudatur), 1890—91 թ. աշակերտուհիների 55,6%-ը ստանում էր նոյն կարգի վկայական և միայն 7%-ը ստանում էր ամենացածր կարգի վկայական (Approbatur)։ Սակայն 1899—1900 թ. միայն 15%-ը էր ստանում ամենաբարձր վկայականը, իսկ 41%-ը՝ ամենացածր։ Գիմնազաւարտ օրիորդներից մեծ մասը այլ ևս չէ շարունակում բարձրագոյն ուսում ստանալու, բացի վերև յիշատակած 12%-ից։ Ամենևին ցանկալի չէ, երբ կին սեռը ուսման և քննութեան վրա նայում է, որպէս մի օդայական սովորութեան վրա։ (sic!)

Ի՞նչ եզրակացութեան է գալիս պրոֆէսոր Պալմբերգը, այս մակերևոյթային դիտողութիւններից յետոյ։ Նրա կարծիքով, որովհետև իդեական սեռի աւելի քան 80%-ը (Ֆինլանդիայում նոյն իսկ 85,5%) ամուսնանում է, և որովհետև բարձրագոյն ուսումը կամ առհասարակ մտաւոր լարված, ինտենզիւ աշխատանքը մաշում ու թուլացնում է մարդու կեանքը, մինչդեռ մեզ հարկաւոր են առողջ մայրեր—այդ պատճառով պէտք է փոխել կանանց ուսման ներկայ սիստեմը և բացառապէս կանանց համար համալսարանին կից հիմնել մի առանձին ֆակուլտէտ, ուր նրանք այսպէս ասած՝ «մայրութիւն անել» սովորեն, այսինքն լսեն ու մարսեն միայն և միմիայն հետևեալ առարկաները. առողջապահական ուսմունք, մանկական խնամատարութիւն և կրթութիւն, տնային տնտեսութիւն, հիւանդի խնամատարութիւն և հաշուապահութիւն։ Հրաշալի դատավճիռ։ Պրոֆէսոր Պալմբերգը աջ ու ձախ պտտվելով, մնում է մեխված մի և նոյն նահապետական հասկացողութեան տեսակէտի վրա, տեղի տալով մի քանի չնչին ձևափոխութիւնների։ Ֆինլանդիայի ազատագիր կանայք գիտէին նախօրօք Պալմբերգի դիտաւորութեան մասին, որովհետև նա նոյն կարծիքները հրատարակել էր մի քանի օր առաջ ֆինլանդական մի թերթում, ուստի և նրանք շտապել էին գրաւոր ուղարկել իրանց հակաճառութիւնը Նիւրնբերգի կուսակից գերմանուհիներին, որպէս զի սրանք կօնգրէսում ընդդիմախօսեն։ Ֆինլանդիայի ազատագիր կանայք ջրում են պրոֆէսոր Պալմբերգի ասածները մօտաւորապէս հետևեալ կերպով։ Եթէ այժմեան ուսանողուհիներից քչերն են քննութիւն տալիս և լաւ դիպլոմ չեն ստանում, ապա դա մի ընդհանուր երևոյթ է, որ համեմատական չափով բոլորովին նոյն կերպ գոյութիւն ունի և արական սեռի մէջ։ Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ միջնակարգ դպրոցներում շատ աղջիկներ հաստատութեան վկայական չեն ստանում, այլ շուտ հեռանում են դպրոցից, կամ գիմնազիաւարտները մեծ մասամբ չեն շարունակում համալսարանում սովորել, ապա դրա հիմքը պէտք է որոնել այն տնտեսական վիճակի մէջ, որ բռնադատում է շատ ծնողների իրանց դուստրներին աւելի վաղ հանել դպրոցից և կարգել որ և է արդիւնաւոր պաշտօնի։

Բացի դրանից խիստ ընդդիմախօսութեան ենթարկվեց պրոֆէսոր Պալմբերգը իր մի հայրենակցից՝ մանկավարժութեան պրոֆէսոր Բրուինի (Հելսինգֆորսից) կողմից, որ կենդանի փաստերով պնդում էր, որ իր տասնեակ տարիների փորձառութիւնը՝ թէ գիմնազիական և թէ համալսարանական քննութիւնների ժամանակ, գտել է միշտ դրական և փայլուն կըծեր կին աշակերտների և ուսանողների մէջ։

Այն հարցը, թէ արդեօք երկսեռ սերնդի համախմբված ուսուցումից որ և է բարոյական վտանգ կարելի՞ է սպասել թէ չէ,—գըտնում է կանանց համար միանդամայն նպաստաւոր լուծում։ Ամերիկայի Միացեալ-Նահանգների տասնեակ տարիների փորձը խոշոր ապացոյց է, որ այդ տեսակ վտանգ ամենևին գոյութիւն ունենալ չէ կարող, նոյն իսկ հասակաւորների մօտ։ Իսկ այն հարցը՝ արդեօք իդեական սեռի դպրոցական սերունդը ընդհանուր առմամբ յա՞ռ է կանգնած արականից թէ չէ, հաստատութիւն ունեն գիմնազիայի պահանջներին բաւարարութիւն տալու, վճռվեց դարձեալ յօգուտ կանանց, հակառակ պրոֆէսոր Պալմբերգի երկար ու ձիգ, միակողմանի և ոչինչ չապացուցանող դասախօսութեան։ Նոյն ինքը, այդ տեսակէտից պահպանողական Գերմանիայի ներկայացուցիչները՝ յանձնիս երկու գիմնազիական փորձառու ուսուցիչների (Վիւրտեմբերգից և Բադէնից), ջերմ ոգևորութեամբ պաշտպանեցին կանանց եռանդն ու ընդունակութիւնը ուսման մէջ։ Նրանք պնդում են, որ ոչ միայն գիմնազիայի օրիորդները հաւասար ընթացքով քայլում են տղաների հետ, այլ և օտար լեզուների և մաթեմատիկայի մէջ գերազանցում են արական սեռին։ Այդպիսով թէ երկսեռ սերնդի համախմբված սովորելու և թէ կանանց ուսում ստանալու հաստատութեան խնդրի տեսակէտից՝ կանայք յաղթաբար անցնում են ամբողջ կօնգրէսում։

(Կը շարունակվի)

մարտ ամսից մինչև ապրիլի 15-ը եղանակները շատ վատ են։ Գիւղացիք մնացին առանց վարի։ Անասունները սովից կը կտորվին, եթէ եղանակները այսպէս շարունակվին։ Աշնան ցանած արտերը կորել են։ Ինչպէս լսեցինք, Բ. Գիւղում տարածված է մի տեսակ հիւանդութիւն, որը զգալի զոհեր է տանում. բժիշկ չը կայ։ Գարի գցող պառաւների և ալրին կորող դալլաքների ասպարէզ է»։

—

Գառնի-Բասարի դաւառի ԹԱՄԱՄԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Թամամլու գիւղը ընկնում է այն մի շարք գիւղերի կարգում, որոնք գտնվում են Երևանից դէպի Նախիջևան տանող ճանապարհի վրա և որոնք, համարեա առանց բացառութեան, բոլորն էլ «լու» վերջաւորութիւնն են կրում։ 1828 թուին Պարսկաստանից գաղթելու օրից մինչև ներկայ տարին գիւղացիք եկեղեցի չունէին, աղօթում էին հարևան Ղարահամզալու գիւղի կիսախարխուլ եկեղեցում։ Վերջապէս 10—15 տարի շարունակվող վէճերից ու տարաձայնութիւններից յետոյ, շնորհիւ տեղացի քահանայ Բէկզադեանի, աջողվեց այս ապրիլ ամսվայ սկզբներին եկեղեցու կառուցման հիմը դցել։ Կիրակի, ամսիս 11-ին, Երևանի հայոց թեմական փոխանորդը այցելեց Թամամլու, և շրջակայ գիւղերից հաւաքված բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ օծեց եկեղեցու հիմքը։ Հանդէսը վերջանալուց յետոյ, մօտիկ գիւղերից եկած, հանդէսին մասնակցող քահանաները գնացին առաջնորդի մօտ։ Կարճ հարց ու փորձից յետոյ, այդտեղ, ի միջի այլոց, պարզվեց, որ Ղ. քահանան, բացի իր սեփական ծուխից, հովւում է նաև Նօվրուզլու և Իմանշալու գիւղերի ծխերի մի մասը (այդ գիւղերը հեռու են միմեանցից 10 վերստ) և մի և նոյն ժամանակ իրանց գիւղի արքունի միդասեան դպրոցում կրօնուսոյցի պաշտօն ունի, իսկ մի երկրորդը, քահանայ Ամ.-եան, հովւում է Ներքին-Ղոյլասար և Դալուլար գիւղերը (այդ վերջիններն էլ, հեռու են իրարից 6 վերստ) և միաժամանակ այդ գիւղերում եղած արքունի դպրոցների կրօնուսոյց է»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Քաղաքից մօտիկ Խաչմազ գիւղացի մի նորապակ երիտասարդ, Աղաբէկ Աթամալեանը, մի տարի առաջ ամուսնանալուց յետոյ՝ ճանապարհվել էր Բագու փող վաստակելու. այս զատկական տօներից առաջ հայրենիք վերադառնալու համար ճանապարհվել էր Բաքուից։ Խանի-բաղի իջևանում մութն ընկնելով՝ երիտասարդը իջնում է դիլիժանից այնտեղ գիշերելու, որ այդտեղից ուղղակի միւս օրը ճանապարհվի դէպի իրանց տունը։ Սակայն անցնում է մի շաբաթ, երիտասարդը չը կայ։ Նամակներից, հեռագիրներից իմացվում է, որ նա ճանապարհված է Բագուից։ —Սակայն չը կայ ու չը կայ։ Խանի-բաղում գտնում են այդ երիտասարդի միջոցով ուղարկված յանձնարարական նամակներ. այդ նամակներից երևում է, որ մօտ 800 բուբլի նրան յանձնարարված է եղել զանազան մարդկանց հասցնելու, բացի իր սեփական դրամից։ Համագիւղացիք և երիտասարդի հայրը դալիս են Խանի-բաղը բահ ու բրիչներով, հարց ու փորձ անում, որտեղում են իջևանի շրջակայքում և մի շաբաթից յետոյ գտնում են գետի ափին հողի տակ նորաթաղ մի ուրիշ հայի դիակ, որ մի երիտասարդ էր մօտիկ Խնձորեսկ գիւղացի, որին օտարութիւնից դառնալու ժամանակ՝ այնտեղ սպանել էին—թալցրել։ Մի քանի օրից յետոյ գտնում են և մի ուրիշ հայի դիակ աղբի տակ թաղած, որ մի ժողովք առնող աղքատի դիակ էր։ Ժողովարարութիւնից դառնալուց, այդտեղ սպանել էին։ Ոստիկանութիւնը այդ անյայտ դիակը յանձնում է մօտիկ հայ գիւղացիներին թաղելու։ Անցել էր արդէն մի ամսից աւել և երիտասարդի դիակը գտնվում է, խաչմազեցի գիւղացիների ջանքով, Խանի-բաղի շրջակայքում՝ հողի տակ նորաթաղ. խեղճին խեղդամահ էին արել, հագուստը հանել, թողել մի շալիկ և մի ոտաշոր, իսկ դիակը գցել չուալի մէջ և այդպէս ծածկել հողի տակ։ Այս բոլորը, ի հարկէ, յայտնում են ոստիկանութեան. դիակը գիւղացիք տանում են գիւղ և լողացնելու ժամանակ տեսնում են ոտաշորի տակ մի թաշկինակում կապած ոտին մօտ 300 բուբլի։ Նա պահել էր այդ փողերը մի քանի տեղերում և սպանողները չէին նկատել։ Ասում են, որ դարձեալ նորերս էլի մի մարդ է անյայտացել այդ ճանապարհին։ Այսպէս Խանի-բաղ իջևանը ներկայացնում է մարդասպանների մի բոյն։ Անկասկած մարդասպանները այդտեղի մի երկու երեք թուրք թէյավաճառներն են։ Պատշաճաւոր գանգատներ արդէն արված են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Ռուսական դաշտային ոյժերը։ Վերջին հեռագիրներին իբրև բացատրութիւն կարող է ծառայել «Times» լրագրի մի առաջնորդող յօդուածի բովանդակութիւնը, որ ցոյց է տալիս, թէ ռուսաց դաշտային ոյժերը դեռ այնքան մեծ չեն, որ վճռական հարուած հասցնել կարողանան Թշնամուն Եալու գետի վրա, որովհետև ռուսների այդպիսի տակտիկան կարող է թուլացնել ռուսներին ուրիշ կէտերում։ Ծովի վրա ունեցած տիրապետող վիճակը հնարաւորութիւն է տալիս Եապոնիային նախաձեռնող լինել և գեներալ Կուրոպատկինը պէտք է սպասէ այն վայրկեանին, երբ եապոնացիները կը պարզեն ամբողջութեամբ իրանց ծրագիրը։ Ներկայումս նա չէ կարող իմանալ, թէ եապոնացիները որ կողմից հարուած կը հասցնեն։ Անկասկած, գլխաւոր հրամանատարը իր գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնէ այն դիրքի վրա, որ եապոնացիները բռնել են Եալու գետի վրա, ուր փորը զօրախմբեր անցնում են գետաբերանի մօտ, բայց սպառնում են անցնել և գետի աւելի վերևի մասում, այսինքն սպառնում են դուրս գալ ռուսական զօրքի ետևը, սակայն ոչ պակաս ուշադրութիւն նա պէտք է դարձնէ և պատերազմի բեմի ուրիշ կէտերի վրա։ Այն սպասողական դրութիւնը, որ պահում է մինչև այսօր գլխաւոր հրամանատարը, ցոյց է տալիս, որ նրա տրամադրութեան ներքոյ չը կայ զինուորական ոյժերի թուական գերազանցութիւն։ (T. ar.).

Ռուսները ե՞րբ կընդունեն միջնորդութիւն։ Լօնդոնի «Express» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, թէ Պետերբուրգի անգլիական նոր դեսպան սըր Հերբինգը բերել է իր հետ առաջարկութիւն բարեկամական միջնորդութեան մասին Ռուսաստանի և Եապոնիայի մէջ։ Այդ միջնորդութիւնը—Էդուարդ VII թագաւորի անկեղծ ցանկութիւնն է, թէև թագաւորը անձնապէս իր ծառայութիւնները չէ առաջարկում։ Դեռ չէ հասել ներգործական միջամտութեան ժամանակը, բայց թագաւորը թէ գործերի վիճակի մանրազնին ուսումնասիրութեամբ և թէ բանակցութեամբ օտար դիպլոմատների հետ Կոպէնհագէնում և Լօնդոնում, համոզվել է, որ Ռուսաստանը հակամիտ է քննել միջնորդութեան խնդիրը և լսել առաջարկութիւնը, երբ կը հասնի յարմար րոպէն, այսինքն հէնց որ ռուսները կը տանեն առաջին յաղթութիւնը ցամաքի վրա։ (Бир. В.)

Գենեռալ Շանուանի կարծիքը։ Ֆրանսիացի գեներալ Շանուան, որ առաջ Ֆրանսիայի զինուորական մինիստր էր, մի ժամանակ եղել է եապոնական զօրքի կրթութիւն տուողը. եապոնացիները սովորել են առաջ ֆրանսիացիների և ապա գերմանացիների ու անգլիացիների մօտ։ Գենեռալը ոչ մի կասկած չունի, որ առաջին վճռական գործողութիւնները ցամաքի վրա ցոյց կը տան ամբողջ աշխարհին ռուս զինուորի գերազանցութիւնը եապոնական զինուորի վրա. վերջինը ֆիզիքապէս թոյլ է և անընդունակ տանել ծանր ցամաքային արշաւանքը։ Եապոնական հետևակ զօրքի թոյլ կողմը նրանումն է, որ նա չէ կարողանում հագնել եւրոպական կօշիկներ. այդ կօշիկները նրա համար—տանջանք են։ Թէև արշաւանքի ժամանակ եւրոպական կօշիկները կարելի է փոխարինել սանդալներով, բայց սրանք շուտ են մաշվում։ Բացի դրանից եապոնացի զինուորը չէ կարողանում տանել ցրկանքներ, նա սովոր է կոմֆորտի։ (Бирж. Вѣд.)

ԼՈՒԻՐԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

«Ինդիէն Դէյլի Նիւս» անգլիական թերթի փետրվար 9/22 համարի մէջ կարդում ենք հետևեալը։

«Երէկ Նորին Սրբազնութիւն՝ Սահակ արքեպիսկոպոս Այվազեանը Կալկաթա ժամանեց Բումբայու պօստատար գնացքով, որը հասաւ Հաւարայի կայարանը երեկոյեան ժամը 6—45 ին։ Կայարանում Նորին Սրբազնութեանը դիմաւորեցին հետևեալ անձինք։ Ս. Կ. Տագօր՝ Փոխ-Հիւպատոս Պարսկաստանի, տէր Մ. Պետրոսեան՝ քահանայ Կալկաթայի Հայոց եկեղեցւոյ, տէր Ե. Ս. Յովհաննիսեան, տէր Կ. Թումիկեան, պ. պ. Գ. Սամ, Վ. Աբրար, Յ. Ն. Գրիգոր և Յարութիւն՝ երէցփոխ եկեղեցւոյ։ Ժամը 7-ին Նորին Սրբազնութիւնը տէր Պ. Հ. Յակովբջանեանցի ուղեկցութեամբ՝ կառքով գնաց Հայոց Ս. Նազարեթայ եկեղեցին, ուր Հայոց հասարակութեան մի խուռն բազմութիւն համախմբած էր ընդունելու նորան։ Եկեղեցին շքեղօրէն զարդարված էր կանաչներով, դրօշակներով և լուսաւորված չինական լապտերներով։ Եկեղեցական արարողութիւնից յետոյ՝ Նորին Սրբազնութիւնը օրհնեց ժողովրդին և ապա առաջնորդեց քահանաների ընակարանը։ Եկեղեցւոյ երեսփոխ՝ պ. Յարութիւնեանը ի դիմաց մասնախմբի և Հայոց համայնքի արտասանեց մի հակիրճ բարի գալստեան ճառ, որին Սրբազանը յայտնեց իր սրտագին շնորհակալութիւնը. ապա հասարակութիւնը ցրվեց»։

—Նոր—Զուղայեցի Աւետիք Ն. Կրէտեանը 12 տարի վաճառականական գործով գտնվում էր Զաւայեան Ամպնան կղզու վրա։ Մի քանի ամիս առաջ որոշում է վերադառնալ Եւրոպայի վրայով Զուղա՝ իր մօրն ու ազգականներին տեսնելու։ Գնում է Լոնդոն և Մանչեստր. Ծննդեան տօներին անցնում է Հոլանդ։ Այնտեղից շոգենաւով կրկին Լոնդոն վերադառնալիս, ընկնում է ծովի մէջ և խեղդվում։ Պատճառը յայտնի չէ։ Կատակատարի մասնաւոր նամակից իմանում ենք, որ Զաւայում օրինական կտակ է կազմել, որով իւր շարժական և անշարժ ունեցածի, (Զաւայում մերձ 20000 գիլդր, Զուղայում մի տուն և մի այգի) 1/4 մասը նուիրել է Զուղայի Ազգային դպրոցներին, իսկ մնացածը իր դժբախտ մօրը, որի միակ որդին էր։

—Փէրիա գաւառից մեզ հաղորդում են, որ մի քանի հայրնակ գիւղերում դիֆտերիտ (կուլացաւ) հիւանդութիւնը տանում է շատ զոհեր մանուկներից։ Դժբախտաբար ոչ մի բժշկական օգնութիւն. խաւար ժողովուրդը նախապաշարմունքով է վերաբերում դէպի դիֆտերիտը, ինչպէս նաև դէպի ամեն մի տարափոխիկ հիւանդութիւն։ Առողջապահական պայմանների մասին ոչ մի հասկացողութիւն չունի, ուստի շատ հեշտութեամբ վարակիչ հիւանդութիւններ տարածվում են։

—Նոր-Զուղայի երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը մարտի 6-ին պատարագից անմիջապէս յետոյ, Ս. Կատարինեան օրիորդաց ուսումնարանի դահլիճում, ի պատիւ նոյն դպրոցի հիմնադիր արժանայիշատակ Մանուկ Յորդանանեանի՝ տուեց ցերեկոյթ. իսկ 13-ի երեկոյեան, Ազգային Կենդրոնական դպրոցի դահլիճում, Ս. Գրիգոր Լուսաւորչի յիշատակին՝ երեկոյթ։—Սրանք ևս նախկին երեկոյթների նման գրական բնաւորութիւն էին կրում։ Թէ ցերեկոյթին և թէ երեկոյթին աշակերտ—աշակերտուհիները, նաև վարժուհի Աշխէն Դաւթեանը, տօնի հերոսների կեանքի ու գործունէութեան մասին՝ արտասանեցին ոտանաւորներ. իսկ երգեցիկ խումբը երգեց ազգային ու ժողովրդական երգեր։ Խօսեց Հայր Բագրատ վարդապետ Վարդազարեանը. խօսեց և ուսուցիչներից Ա. Մեղրեանը։ Սովորականի նման, մանաւանդ ս. Գրիգոր Լուսաւորչի տօնի երեկոյեան հասարակութիւնից ներկայ էր մեծ բազմութիւն։ Ի դէպ մի նկատողութիւն. նկատի առնելով հասարակութեան լաւ տրամադրութիւնը դէպի երեկոյթները, ուսուցչական խումբը լաւ կանէր, եթէ առանձին ուշադրութիւն դարձնէր աշակերտ-աշակերտուհիների թէ առոգանութեան վրա և թէ այնպէս անէր, որ նրանք արտասանէին բարձր հասարակութեան լսելի. խոյս պիտի տալ ընդարձակ շարադրութիւններից։

—Զուղայի երկսեռ դպրոցների ուսուցիչ Մկրտում Կարապետեանը թարգմանել է անգլերէն՝ մեր շնորհալի գրող Աւետիս Ահարոնեանի «Պատկերներ»ը։ Յուսալի է շուտով կը տպագրուի Կալկաթայում կամ Լոնդոնում։

(«Նոր-Զաղայի Լրաբեր»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա և Թագաժառանգ Մեծ Իշխանը Գատչինօ տեղափոխվեցին բնակելու։

ՄՈՒԿԴԷՆ։ Տեղեկութիւններ են ստացված, թէ ապրիլի 16-ին, Ֆինկեադուն կայարանից 10 վերստ հեռաւորութեան վրա սահմանապահ զօրքի հարիւրեակը ընդհարում ունեցաւ խունխուզների հետ։ Մեզանից սպանված է մի զինուոր, վիրաւորված են պօրուչիկ Կօլաբրեվ և 2 զինուոր։ Մութը վրա կոխելով՝ խունխուզների կորուստը չորոշվեց։

ՐԻԳԱ։ «Վարեագի» հերոսներին Ռիգայի ճանապարհի վրա ամեն տեղ ողջունվում էին հասարակութեան կողմից։ Ռիգայում բազմաթիւ ժողովուրդ լցրել էր լուսավորված փողոցները։ Ժողովուրդը ոգևորված ողջունեց նրանցմի քանիսին ձեռների վրա բարձրացրին։ Պարտէզում քաղաքը ընթրիք տուեց, որից յետոյ նրանք ուղևորվեցին Լիբաւա։

ԿԱՄԻՇԼՕՎ։ Զրաբուժական սեզոնի բացումը Օբուխովի հանքային ջրերում նշանակված է ապրիլի 25-ին։

ՏՕԿԻՕ։ «Մայիա» նաւի հրամանատարը գեկուցանում է. «Մայիա» և «Ուշժի» նաւերից և ականանաւերից բաղկացած նաւախումբը ապրիլի 18-ին Եալուով վեր բարձրացաւ և սկսեց ռմբակոծել Թշնամուն։ Վերադարձի ժամանակ ականանաւերը յանկարծակի ենթարկվեցին ռուսաց թնդանօթների ռմբակոծութեան։ Կէս ժամ տևող սաստիկ կրակից յետոյ թշնամու թնդանօթները սիրվեցին լռեցին։ Այնուհետև նաւախումբը առանց կորուստների հասաւ Իօնամպօ։ Մեր զինված բարկանները նոյնպէս առաւօտը հասան Անդուն և կէս ժամվայ սաստիկ կռուից յետոյ ստիպեցին ռուսաց հետևակազօրքին և թնդանօթներին յետ նահանջել։ Երևում էր, որ քաղաքում հրդեհ սկսվեց։ Մի տեղացի պատմում է, թէ Թշնամին Անդունը այրելով հեռացաւ այնտեղից։

ՊՕՏՍԴԱՄ։ Առաւօտը ժամանեցին կայսրը և կայսրուհին։

ՎԻԵՆՆԱ։ Ֆրանց-Յովսէփ մեկնեց դէպի Բուդապէշտ։

ՏՕԿԻՕ։ Եապօնացիների Եալու գետը անցնելու մասին գեներալ Կուրոկի պաշտօնապէս զեկուցանում է. «Կամուրջներ ձգելու պատրաստութիւնները հնարաւոր անելու դիտաւորութեամբ՝ գվարդիայի և երկրորդ դիվիզիայի մասերը ապրիլի 13-ին յարձակվեցին Թշնամու վրա, որ կանգնած էր Եալուի կղզիակների վրա. նրան յետ մղեցին և գրաւեցին կղզիակները։ Գվարդիայում 9 հոգի թեթև վէրքեր ստացան և 16-ը ծանր։ Երկրորդ դիվիզիան ոչ մի կորուստ չունեցաւ։ Կամաւորների խմբի հրամանատար Զենիդով մեռած գտնվեց և թաղվեց Ի-Զժուում։ Ապրիլի 14-ին կէսօրից սկսած՝ Թշնամին ընդհատումներով ռմբակոծում էր Ի-Զժուն։ Ապրիլի 13-ին երկու մարտանաւ և երկու շոգենաւ Եալուով վեր բարձրացան և սկսեցին թնդանօթաձգութիւն Թշնամու հետ, որին ստիպեցին կրակը դադարեցնել։ Նաւախումբը վնաս չը կրեց։ Ապրիլի 15-ին երկու վաշտեր հետախուզութիւն կատարեցին Խուշանի կողմը։ Թշնամին յետ քաշվեց, թողնելով 5 սպանվածներ։ Ռուսները կրակում էին առանց աջողութեան՝ մեծ տարածութեան վրա գտնվող դիրքերից։ Կուլէնչինի մօտ սկսված են նախապատրաստական աշխատանքներ։ Ապրիլի 16-ին 13-դ դիվիզիան սկսեց կամուրջներ դնել Եալու գետի վրա։ Առաւօտեան 10 ժամ 40 րոպէից մինչև կէսօրվայ 1 ժամ 20 րոպէն ամեն կողմից տեղի ունէր զօրեղ ռմբակոծութիւն, բայց Թշնամին շուտով ստիպված էր լռել։ Մեր կորուստներն են. թեթև վիրաւորված են 5 օֆիցէրներ, երկու զինուոր սպանված են և 22 վիրաւորված։ Նոյն օրը երեկոյեան ժամը 8-ին պատրաստ էր գլխաւոր բազուկի վրայի կամուրջը և բանակն անցկացաւ նրա վրայով դէպի Կուշունիւ։ Ծովապետ Դէսսիայի մէկ մասը բարձրացաւ գետովը և Անդունսեանից ներքև կուի մասամօտիկ տարածութիւնից հետևակ և ձիաւոր 400 մարդու հետ։ Նրանք նոյնպէս ընկան թնդանօթների զօրեղ կրակի տակ։ Սակայն մի ժամ չանցած՝ Թշնամին նահանջեց։ Մեր կողմից ոչ մի կորուստ չեղաւ։ Ապրիլի 18-ի լուսաբացին մենք ռմբակոծեցինք (?) և ստիպեցինք կրակը դադարեցնել։ Ժամը 7 և 30 րոպէին բոլոր դիվիզիաները յարձակում գործեցին և գրաւեցին «կուլէնչէնեան բարձունքները»։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաստանի հետ տնտեսական դաշնագիր կնքելու բանակցութիւնների մասին հաղորդում են, որ իրերի դրութիւնը մնում է անփոփոխ։

ՏՕԿԻՕ (Բէյտ. գործ.)։ Պաշտօնական։ Ծովապետ Կամիլուրայի հրամանատարութեան տակ եղած էսկադրան ապրիլի 13-ին Գէնզան ժամանեց։ Նա չը կարողացաւ կատարել Վլադիվոստոկի ծրագրված ռմբակոծութիւնը անընդհատ կանգնած մառախուղի պատճառով։ Տեղեկանալով, որ «Կինշիսմարուն» յարձակման ենթարկվեց, ապրիլի 14-ին էսկադրան նորից որոնելու դուրս եկաւ նաւահանգստից և նորից շատ մօտեցաւ Վլադիվոստոկին, բայց շարունակվող մառախուղի պատճառով՝ Գէնզան վերադարձաւ։

ՊՕՐՏ-ԱՐԹՈՒՐ, ապրիլի 19-ին։ Ազատված քիչման Եակովլեվի ցուցումով Մեծ Իշխան Կիրիլլ Վլադիմիրովիչին ազատեց «Գայդամակայի» մակոյկը և յանձնեց ականանաւին։— Պօրտ-Արթուրի շրջանը խաղաղ է։

20 ապրիլի

ԲԵՐԼԻՆ։ Ցունական կառավարութիւնը պահանջում է՝ իբրև բաւարարութիւն Զմիւռնիայի միջնադէպի՝ փոխել ոստիկանական պրէֆէկտին և պատժել զինուորներին։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ (Սեփ. թղթ.)։ Ապրիլի 16-ի լուսաբացին 10 նաւից և 6 ականանաւից կազմված էսկադրան երևաց հորիզոնում, նախ Ուսսուրիական ծոցում, իսկ կէսօրից յետոյ շուտ տուեց և կանգ առաւ Ռուսական կղզուց հարաւ, Շկօտա կղզու մօտ։ Ռուսական կղզուց ցերեկվայ ժամը 3-ին լսվում էին թնդանօթի մի քանի հարուածներ և հրացանի կրակ, բայց ոչ երկար ժամանակ. ոչ մի լուրջ հետևանք տեղի չունեցաւ։ Երեկոյեան դէմ թշնամին անյայտացաւ։

ՏԵԱՆՑԶԻՆ։ (Ռէյտ. գործ.)։ Ռուսական ինժենէրները չինական բանուորների օգնութեամբ Լեաօխէի ամրութիւններ են շինում՝ Սինմինտինից երեք մղոն և Գուանցզիից երկու մղոն հեռաւորութեամբ, ուր գտնվում է մշտական բանակատեղը։ Երկաթուղին պահպանվում է 180 մարդուց կազմված մի զօրախմբով։

ՏՕԿԻՕ, (Ռէյտ. գործ.)։ Երբ ապրիլի 18-ի առաւօտեան եապօնացիները տիրեցին Կուլէնչէնի և Իշօկի միջև եղած բարձրութիւնների շարքին, Եալու գետի աջ ափին, ռուսները երկրորդ անգամ դիմադրութիւն ցոյց տուին Կուլէնչէնից հիւսիս-արևելք եղած բլուրների վրա. եապօնացիներն առաջ շարժվեցին երեք ճանապարհով և գրաւեցին Անդունի և Լուշուկարիի միջև զիծը. եապօնական գվարդիան շրջեց ռուսների դիրքը երեք կողմից և երեկոյեան ժամը 8-ին, կատաղի կռուից յետոյ՝ գրաւեց ռուսական դիրքը։ Ռուսները նահանջեցին դէպի Ֆինխուանչէն։—Ծովապետի երկրորդ օգնական Կամիմուրան, էսկադրայի հրամանատարը, որ գործում է Վլադիվոստոկի դէմ, զեկուցանում է. «Անթափանց մառախուղը ստիպեց ինձ երկրորդ անգամ զգուշանալ Վլադիվոստոկի վրա յարձակվելուց և ռուսական նաւատորմին երկրորդ անգամ դիւրացրեց հեռանալը»։ Երբ առաջին անգամ եապօնական էսկադրան գնում էր դէպի հիւսիս, նա բողոքովին մօտ անցկացաւ դէպի Գէնզան գնացող ռուսական կրէյսէրական էսկադրայի կողքով։ Մինչև անգամ էսկադրաներն իրար չը նշմարեցին։ Երբ եապօնական էսկադրան նորից շրջեց դէպի հարաւ, նա նորից անցաւ ռուսական էսկադրայի մօտով, որ վերադառնում էր Վլադիվոստոկ՝ Գէնզանի վրա յարձակում գործելուց և «Կինշիօմարուն» ընկղմելուց յետոյ։ Երբ Կամիմուրան տեղեկացաւ «Կինշիօմարուի» կորստի մասին, նա նորից դիմեց դէպի հիւսիս և որոնման ժամանակ գտաւ ընկղմված նաւի երեք նաւակները։ Եապօնական կրէյսէրները նկատեցին ափի մօտերը մի քանի ռուսական ականներ, որ պայթեցրին։ Վերջում Կամիմուրան զեկուցանում է, որ հիգշաբթի օրվանից շարունակվող մառախուղը անհնար է դարձնում Վլադիվոստոկի վրա յարձակվելը։

ԼԻԲԱՎԱ։ Երկուշաբթի, կէսօրից յետոյ ժամը 4½-ին ժամանեց «Վարեագի» ծառայողների խումբը, որին դիմաւորեց կայարանում նահանգապետը, գեներալ-լիտէոը, քաղաքային վարչութիւնը և բազմաթիւ հասարակութիւնը, որ ոգևորված ողջունում էր հերոսներին։ Ծառայողների խումբը մուզիկայով դիմեց դէպի քաղաքային կամուրջը։ Փողոցներում կանգնած էին զինուորներ և դպրոցական սաներ։ Քաղաքային կամուրջից հերոսները գնացին նաւահանգիստ, ուր նրանց դիմաւորեցին ծովային օֆիցէրները ծովապետի երկրորդ օգնական Իրեցկու առաջնորդութեամբ։ Ծովապետը շնորհաւորեց նրանց վերադարձը և Կայսերական ողորմածութիւնը։ Ծիսակատարութիւնից յետոյ ստորին ծառայողների համար տեղի ունեցաւ ճաշ 13-դ նաւատորմային էքիպաժում։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ։ Գիշերն այստեղ և շրջակայքում զգացվեց բաւական զօրեղ երկրաշարժ. նոյն երևոյթը նկատվեց և վերին Էլզասում։

ԲԷԼԳՐԱԴ։ Թագաւորն ընդունեց Գուբաստովին մանաւոր ունկնդրութեան։

ՀՌՕՄ։ Լուբէի Հռոմում եղած ժամանակ Վատիկանը Եւրօպայի բոլոր նունցիաներին մի եռանդուն յայտագիր ուղարկեց, բողոքելով կաթոլիկ եկեղեցու գլխաւորին հասցրած այդ նոր և զօրեղ վիրաւորանքի դէմ։

ՍՕՖԻԱ, (Դիմադիր շրջաններից)։ Կ. Պոլսից հաղորդում են, որ մակեդոնական ժանդարմերիայի ֆինանսական մասի հարցը կը կարգաւորվի այս օրերս։ Բ. Դուռը պայմանագիր կը կնքէ օտարազգի օֆիցէրների հետ միասին։—200 բոլգար ուսանողներ գնում են Բէլգրադ, որպէս զի այցելութիւն անեն իրանց ընկերներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգապետի կարգադրութեամբ՝ «Олон. Губ. Вѣд.» լրագիրն ընդարձակում է իր ծրագիրը մտցնելով պատերազմական դէպքերի բաժին։ Գիւղական ազգաբնակութեան համար գինը էժանացրած է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ոչինչ լուրջ բան չէ տեղի ունեցել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 52—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը և 5—7 ժ. երեկոյեան։
Վելիամինօվսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. (Հ. ու. Կ.) 18—50

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մանաւորապէս սիֆիլիս, մորթու և վենէրական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեր Վանքի փողոց, տուն Կուզանովի, Բախչիեվի դեղատան կից։

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մանաւանդ պրակս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տէլէֆոն 825. (Հ. Ե. Հ. Հ.) 24—105

Լոյս տեսաւ
Ա. Ահարոնեանի
ԵՐԵԽԱՆԵՐԸ
պատկերը
Գինն է 2 կոպ.
Դիմել՝ Баку, I. Ярвелянъ, Русскій торгово-промыш. банкъ.
Նոյն տեղը կարելի է ստանալ նաև հետևեալ գրքոյկները՝ Վ. Փափազեանի—«Լուր-Դա-լուր» քրդական պօէման—3 կոպ., «Արաղայի դաշտում» զրոյցը—4 կոպ., «Թռչող խողը» զրոյցը—3 կոպ., Սանտ. Ինգմանի—«Անպոչ հորթը» պատմուածքը—2 կոպ., Մ. Մանուէլեանի—«Էսքիզներ» գրքոյկը—5 կոպ.։ 2—3

Յովհաննես Արամեանցի հրատարակութեամբ լոյս են տեսել հետեւեալ պատկերազարդ հրատարակութիւններ.
1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . 10 կ.
2. Մահմեդ՝ » » » . 7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . 5 »
4. Սահակ Պարթև՝ » » . 5 »
5. Հաուպտման՝ » » . 15 »
6. Մեծն Ներսէս՝ » » . 10 »
7. Զրադաշտ, կազմեց Մ. Թամամշեան . 7 »
8. Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնատու կովերը ճանաչելու միջոցները, 26 պատկերով Գ. Մեծատուրեանի 15 »
Շուտով լոյս է տեսնելու 1. Պուշկին, 2. Վիրխով.
Պատրաստ է տպագրութեան համար՝
Ա. Քալանթար. — Հանրամատչելի ձեռնարկ կաթնատնտեսութեան։
Պատրաստվում են նոր հրատարակութիւններ։
Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гутенбергъ“. 2—3

Վաճառվում են
1. 26 տղամ. և 1 աղջիկ, Մ. Գօրկու . 5 կ.
2. Դանկօի սիրտը, » Նոյնի . 3 »
3. Իմ ուղեկիցը » Նոյնի . 10 »
4. Արտիսաը, Շիրվանզադէի . 15 »
5. Եղոյի քոռ բախտը, Շահբիարի . 3 »
6. Եապօնիա, Ա. Խաչատրեանի . 3 »
7. Սպիտակ ծաղիկ, Էլ. Օժէշկօի . 5 »
8. Կնոջ վրէժը, Կ. Մենդեսի . 3 »
9. Որոճն ցանողներ, կամ. 3 գործ. Վ. Տիրացեանի . 30 »
Դումարով գնողներին 30% զեղչ. (քիչ ցանկացողները կարող են ուղարկել մարկաներ)։ Ճանապարհածախսը իրանց վրա։ Ուղարկում եմ նաև վերադիր վճարով։
Դիմել՝ կանխավճարով Тифлисъ. (Пушкинскій пассажъ) Гев. Бабурянцу. 2—3

ՄԵԶ ՄՕՏ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
«Դաւիթ Բէկ» Բաֆֆի I II III գիրք գ. 3 ր. 50 կ.
«Սամուէլ» » » » 3 ր. 50 կ.
«Ոսկի ամաղաղ» » » 1 ր. — —
«Զահրումար» » » 2 ր. — —
«Տանկահայէ» » » — — 50 կ.
«Խեղճերը» Ահարոնեանի (և միւս աշ.) 1 ր. — —
«Հացի խնդիրը» Պ. Պոշեանի գինն է 1 ր. 30 կ.
«Սօս եւ Վարդիթեր» » » 1 ր. 20 կ.
«Ընտիր Հայկազունք» պատկերազարդ. 2 ր. 50 կ.
«Ծնային բժշկարան» I և II հատոր. 2 ր. 60 կ.
«Սոխակ Հայաստանի» . . . 1 ր. 20 կ.
«Շիլլեր» պատկեր. Ս. Թառայեանի. 2 ր. — —
«Լծի տակ» Ի. Վազովի. . .— — 80 կ.
Նաև «ազգային գործիչների» շատ տեսակ պօստ կարտեր, որոնք պատրաստված են արտասահմանում (Իտալիայից), տ. Սիրանոյշը զանազան դերերում, «Էմիլ Դիլօն», «Հայ դիւցազնուհիք» և այլն և այլն հատը 5 կ., 100 հատը 3 ր. 50 կ., 1000 հատը 30 ր. և այլն, հայերէն զանազան գրքեր և պատկերներ։
Դիմել՝ Баку Оганнесу Газанчіану. 1—3

Հինգ տարվայ
փորձված մի դիւղատնտես, որ սովորած է Ֆրանսիայում, պաշտօն է խնդրում մասնաւոր կալուածքներում։ Դիմել «Մշակի» խմբագրատանը։ 3—3

Լոյս տեսաւ
Թ. ԽՈՒՍԿԻՎԱՉԷԻ
«ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ»
(Էսկիզ)
վրաց. թարգմ.
Գինն է 3 կոպ.
Դիմել՝ Զաքարիա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոց»։

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ
(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում։

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։
Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 19) 4—20

Լոյս տեսաւ
ՆՈՐ-ԳԻՐՔ
ԱՆՀՈՒՆԻ ԷԶԵՐՈՒՄ
Բանաստեղծութիւններ Հ. Համբարձումեանից։
Գինը 60 կոպ.
Դումարով գնողներին զեղչ 30%
Դիմել՝ Պետերբուրգ, Պուշկինեան արագատիպ, Լեշտուկով փ. 4, և Թիֆլիսի ու Բագուի գրավաճառներին։ 2—2

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
գրողների, գիտանականների, պատմական գործիչների, գիտութիւնների, գրականութիւնների և երկիրների—համաշխարհային և կովկասեան ու հայկական՝
(Մօտ 1000 էջ եւ մօտ 350 պատկերներով)
խմբագրութեամբ և հրատարակութեամբ և «Հանրաստէլի Գրադարանի» հրատարակիչ Հ. Առաքելեանի, նմանողութեամբ Պավլենկովի «Энциклопедическій Словарь» և ֆրանսերէն Dictionnaire—Manuel Illustré des Ecrivains et des Littératures» հրատարակութիւնների։
Հանրագիտական պատկերազարդ բառարանը կարևոր օժանդակ և օգտակար տեղեկատու կը լինի ամեն մի ինտելիգենտ և ինքնակրթութեամբ զբաղվող անձի համար։ Բացված է բաժանորդագրութիւն. գինն է մինչեւ բառարանի լոյս տեսելը—4 ր., լոյս տեսնելուց յետոյ 5ր., կազմով,—որ կը լինի շքեղ և գեղանկար—1 ռուբլի աւելի։ Ճանապարհածախսի համար պէտք է վճարել 50 կ., իսկ կազմածների համար 70 կ.։ Կարելի է վճարել մաս-մաս—2 ր., և յետոյ 2 ր. 50 կ.։ Պէտք է դիմել բացառապէս՝ կազմող—հրատարակիչ Հ. Առաքելեանին այս հասցէով. Թիֆլիս, խմբ. «Մշակ»-ի, Тифлисъ. Редакція «Мшакъ».
Որովհետև Հանրագիտական Բառարանի տպագրութեան ծախքը մեծ է, ուստի քիչ քանակութեամբ է տպվելու, այդ պատճառով ցանկալի էր, որ ստորագրողները շտապէին մինչև մայիս ամիսը յայտնել։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ընկերութեան **ԳՐԱՄՄՕՖՕՆ** Ռուսաստանում
Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպէկտ, Երեւանցի տուն № 7.
Հասցէն հեռագրով Թիֆլիս
ԳՐԱՄՄՕԿՕՄՊԱՆԻԱ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենակատարելագործված սալոնական և կօնցերտային գրամմօֆոններ։

Մեծ քանակութեամբ՝ անշշուկ պլաստինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, բրական, պարսկական, տաթարական, լեհական, ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշները։
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ խնդրում ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆաբրիկայի դրօշմին «ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ» առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս կեղծված։
Պահեստում կայ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի է նորոգել փչացած ապարատները։ Գրամֆօնի ուղիղ բանելու համար տրվում է եռաշխատորական թերթ 3 տարի ժամանակով։
Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախքը գնողների հաշվին։
ՈՒՂԱՐԿԵԼԸ ապարատների երկաթուղու բոլոր կայարանները, եւրօպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է պահեստի հաշվին։
Պօստով ուղարկած ապրանքների ծախքը, պահեստը ընդունում է իրան հաշվին կէսը։
Ամեն պլաստինկաներ միայն մեր բաց թողած դրօշմով «Գրող-հրեշտակ» յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով.

Փոքր սովորական » էկստրայ	հատը — 50 կոպ.	Մեծ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 00 կոպ.
Գիգանտ սովորական » էկստրայ	հատը 1 ռ. 30 կոպ.	Տամանիօ	» 1 » — »

Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8½ առաւ. մինչև ժամի 9-ը երեկոյեան։
Պահանջեցէք պատկերազարդ պրէյսկուրանտներ։
Դումարով գնողներին ուղարկվում է Օպէօվի պրէյսկուրանտները պահանջելուն պէս։—Պահանջեցէք լիակատար լիբրետտօ գրամմօֆոնի համար, գինը 1 ր. 50 կ.։ 31—50

Дозволено Цензурою. Тифлисъ, 20-го апрѣля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.